ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎՐՈՐԱ ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, հիմք ընդունելով «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Ավրորա Մարդիգանյանի հուշակոթող-քանդակը Երևան քաղաքի Կոմիտասի անվան պանթեոնի հարակից տարածքում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի ապրիլի 18-ի
N --- Ա որոշման



ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՐՈՐԱ ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթող-քանդակի տեղադրման նախագծի ներկայացման հիմք է հանդիսացել «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավարի դիմում-խնդրանքը (կցվում է), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի և սույն կազմակերպության միջև ձեռք բերված պայմանավորվածությունը, որի համաձայն՝ կարևորելով նշանավոր հայուհու կերպարի հանրահռչակամ և վերջինիս, ըստ արժանվույն, հարգանքի տուրք մատուցելու հանգամանքը՝ նախատեսվում է Երևան քաղաքում՝ Կոմիտասի անվան պանթեոնի հարակից տարածքի նախատեսված հատվածը (տեղանքի առդիրը կցված է), հատկացնել հուշակոթող-քանդակի տեղադրման նպատակով:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը պատրաստ է հոգալ հուշակոթող-քանդակի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը:

Ավրորա Մարդիգանյանը (Արշալույս Մարտիկյան) ծնվել է 1901թ. Դերսիմ գավառի Չմշկածագ գյուղում (Օսմանյան Կայսրություն): Նա մեծ ընտանիքի ութ զավակներից երրորդն էր: Երբ վրահասավ Ցեղասպանության արհավիրքը, Արշալույսը 15 տարեկան էր. նրա աչքի առաջ սպանեցին հորն ու եղբորը, իսկ իրեն՝ մոր և քույրերի հետ բռնությամբ կցեցին դեպի Սիրիայի անապատներն ուղևորվող քարավաններին: Ճանապարհին կորցնելով վերջին հարազատներին՝ Արշալույսը 18 ամիս շարունակ քայլելով, թաքնվելով քարայրերում, Էրզրումից հասնում է Թիֆլիս, որից հետո նավում տեղավորվելով՝ հաստատվում է ԱՄՆ-ում և հանձնվում ամերիկյան միսիոներների հոգածությանը: Արշալույսը 1917թ. գրեց իր ինքնակենսագրականը, որի հիման վրա նկարահանվեց «Հոգիների աճուրդ» ֆիլմը: Այն ունեցավ մեծ հաջողություն՝ ցուցադրվելով աշխարհի տարբեր երկրներում:

Ավրորա Մարդիգանյանը նորագույն հայոց պատմության կարևորագույն կերպարներից է: Նա կարողացավ փրկվել Ցեղասպանությունից և ամբողջ աշխարհին պատմել Օսմանյան Կայսրությունում հայերի հետ տեղի ունեցած դաժանագույն իրադարձությունների մասին:

Ավրորա Մարդիգանյանն իր մահկանացուն կնքեց կատարյալ միայնության մեջ: Նրա մոխիրն ամփոփված է Կալիֆոռնիայի ընդհանուր գերեզմանոցներից մեկում: Ավրորա Մարդիգանյանի պատմությունը «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության և համանուն մրցանակի ոգեշնչման աղբյուրն է՝ որպես վերապրումի և խիզախության խորհրդանիշ: «Ավրորա» մրցանակը շնորհվում է Հայոց Ցեղասպանությունը վերապրողների անունից և ի երախտագիտություն նրանց փրկողների:

Կարևորելով Ավրորա Մարդիգանյանի արժանվույնս գնահատման, ժառանգության

արժևորման և հանրահռչակման, նրա հիշատակը հավերժացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՐՈՐԱ ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթող-քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՐՈՐԱ ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթող-քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ